



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/16**

16.08.2016թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), քննարկելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՕ-248)¹ 283-րդ հոդվածի 1-ին մասի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությունը դռնփակ դատական նիստով անցկացնելու մասով, և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 67-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացիներ Պավել Մանուկյանը և Վարուժան Ավետիսյանը (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Դավիթ Գյուրջյան) (այսուհետ՝ Դիմող) համապատասխանաբար 2016 թվականի մարտի 1-ին և մարտի 2-ին նույնաբովանդակ դիմումներով Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանից խնդրել են որոշել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությունը դռնփակ դատական նիստով անցկացնելու մասով, և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ՊՏ 1998.09.21/22(55):

288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 67-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխանության հարցը:

Դիմողը, մեջբերելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի դրույթները, գտնում է, որ դրանք իրենց փոխկապվածության մեջ, երաշխավորում են անձի՝ իր գործի քննության հրապարակայնության իրավունքի գերակայությունը և հստակ մատնանշում այդ կանոնից շեղվելու դեպքերն ու այն իրավաչափ նպատակները, որոնցով թույլատրվում է հրապարակային դատական քննության իրավունքի սահմանափակումը: Ըստ դիմողի՝ գործի հրապարակային քննության երաշխիքը տարածվում է ոչ միայն գործի ըստ էության քննության, այլ առհասարակ իրեն առնչվող ցանկացած գործի և այդ գործի ցանկացած մասի, այդ թվում՝ միջանկյալ ակտերի ընդունման և դրանց կապակցությամբ քննության վրա, քանի որ նման տարանջատում Սահմանադրության 63-րդ հոդվածը չի նախատեսում:

Նշված հիմնավորումներով Դիմողը գտնում է, որ վիճարկվող քրեադատավարական դրույթները սահմանափակում են կալանավորման վերաբերյալ դատական գործերի քննության հրապարակայնությունը՝ առանց սահմանելու համապատասխան դատական ատյանի համար պարտականություն՝ յուրաքանչյուր դեպքում պարզել դռնփակ դատական նիստ հրավիրելու իրավաչափ նպատակն ու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի հստակ պահանջները:

Դիմողի կարծիքով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իմպերատիվ պահանջը՝ կապված անձի կալանավորմանն առնչվող դատական լուսնները դռնփակ դատական նիստում անցկացնելու հետ, չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից և ուղղակիորեն հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, քանի որ չի անդրադառնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներին ու պայմաններին:

Վիճարկելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը՝ Դիմողը գտնում է, որ այդ դրույթը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանության սահմանադրական իրավունքին:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ սահմանադրական նշված նորմը անձին հնարավորություն է տալիս ընտրելու իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության եղանակը՝ անձամբ կամ փաստաբանի միջոցով կամ երկուսը միաժամանակ: Այդ նորմը չի սահմանափակում անձի իրավունքը մասնակցել իր իրավունքի սահմանափակման օրինականության ստուգմանը, նույնիսկ եթե վերջինս ունի պաշտպան, որն այդ ստուգմանը մասնակցում է: Դիմողը գտնում է, որ դատական ստուգումը մեղադրյալի բացակայությամբ անցկացնելը չի կարող հետապնդել որևէ իրավաչափ նպատակ և զրկում է վերջինիս նրա՝ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված անձամբ պաշտպանվելու իրավունքից:

Ուստի, Դիմողը խնդրել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությունը դռնփակ դատական նիստով անցկացնելու մասով, և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 67-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Վիճարկվող քրեադատավարական դրույթների՝ Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր.283-րդ հոդվածի 1-ին մասի և 288-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 283. Քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննարկման կարգը

1. Միջնորդությունները քննում է դատավորը միանձնյա, **դռնփակ** դատական նիստում՝ միջնորդությամբ դիմած պաշտոնավար անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

Հոդված 288. Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության հիմնավորվածության դատական ստուգումը

... 3. Դատական ստուգումը կատարվում է **դռնփակ** դատական նիստում՝ **դատախազի և պաշտպանի** մասնակցությամբ: ...

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով)¹ այն դրույթների բովանդակությունը, որոնց, ըստ Դիմողի, չեն համապատասխանում վիճարկվող քրեադատավարական նորմերը, հետևյալն է.

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

1) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.

Վերը նշված սահմանադրական նորմերը գրեթե նույն բովանդակությամբ տեղ էին գտել նաև մինչև 2015թ. փոփոխությունները գործող սահմանադրության 18, 19 և 20-րդ հոդվածներում:

Վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցը պարզելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության սկզբունքի համատեքստում, որի բովանդակությունը արդեն իսկ բացահայտվել է Գիտավերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

Այսպես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև

¹ Ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:

ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը կարևորել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք

¹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:¹

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա, մասնավորապես վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը²:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և **կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ**, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին,

¹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»¹:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»²:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ** ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն, անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

¹ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

² Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է։ Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության։ Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել։ Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել։ Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն։

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ։ Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը¹։

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 որոշման մեջ, մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...»։

Կամ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ։

դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Իսկ 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա **դատական ակտերի վերանայման ինստիտուտի** ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը**: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

* * *

Հայաստանի Հանրապետությունում արդի իրավական կարգավորման շրջանակներում դատավարական հարկադրանքի միջոցների և դրանցից հատկապես կալանավորման կիրառման օրինականության նկատմամբ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դատական վերահսկողության ինստիտուտի, ինչպես նաև անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ապահովման այլ երաշխիքների ուսումնասիրության անկյունաքարը, մեր կարծիքով, առաջին հերթին պետք է լինեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, հատկապես որ Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական փոփոխությունների արդյունքում երկրի հիմնական օրենքի մեջ էական փոփոխությունների են ենթարկվել նաև անձի ձերբակալման, կալանավորման, դատավարական հարկադրանքի այլ միջոցների կիրառման, ինչպես նաև այլ դեպքերում անձին ազատությունից զրկելու հիմքերը, կարգը և պայմանները:

Վիճարկվող դրույթների սահմանադրականության կապակցությամբ, կարծում ենք, հարկ է անդրադառնալ հատկապես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներին, որոնց բովանդակությունը ներկայացվում է ստորև.

Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,...

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքնության իրավունք կամ մինչև դատաքնությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքնության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:...

Այսպիսով, կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով կալանավորման դեպքում, որպես անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, նախատեսված է դատական վերահսկողության պարտադիրություն, այն իմաստով, որ կալանավորման ձևով անձին ազատությունից զրկելու իրավազորությունը վերապահում է բացառապես դատարանին: Մինչդեռ ժամանակ, նույն հոդվածը որևէ կերպ չի մանրամասնում կալանավորման հարցի քննության դատավարական երաշխիքներն ու ընթացակարգերը, այդ թվում՝ դատական նիստի դռնփակ կամ դռնբաց անցկացնելու պահանջը:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի նպատակն անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխավորումն է: Ի տարբերություն այլ հարկադրանքի միջոցների՝ կալանավորման դեպքում էականորեն սահմանափակվում է անձի ազատությունը, քանի որ խափանման այս միջոցն, ըստ էության, ազատությունից զրկելու հետ կապված դատավարական հարկադրանքի միջոց է: Այդ

իսկ պատճառով միջազգային փաստաթղթերով և ներպետական օրենսդրությամբ սահմանված է կալանավորման նկատմամբ դատական վերահսկողության կարգ՝ ապահովելու համար այդ միջոցի կիրառման օրինականության երաշխավորումը, որպեսզի այն իրոք կիրառվի միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և պայմաններում և միայն այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ կալանքը կարող է կիրառվել որպես խափանման միջոց: Կալանքի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի սահմանման նպատակն անհիմն և առանց անհրաժեշտության անձանց կալանավորելու դեպքերի կանխումն ու բացառումն է, մինչդեռ դատական վարույթն իրականացնող մարմինների կամայականությունների և չարաշահումների զսպումը:

Այսպիսով, մինչդեռ դատական վարույթում կալանավորման հարցի լուծման գործընթացում դատարանի ներգրավման էությունը լրացուցիչ դատավարական երաշխիքների ստեղծումն է կալանավորման ենթակա անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման համար: **Այդ ինստիտուտը հնարավորություն է տալիս կալանավորման վերաբերյալ միջնորդության քննարկմանը մասնակից դարձնել երկու իրավահավասար կողմերին՝ մեղադրանքի և պաշտպանության, սահմանելով դատարանի ակտիվ և ղեկավար դերը՝ կալանավորման վերաբերյալ որոշման կայացման բացառիկ իրավունքը վերջինիս վերապահելով:**

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինը դատական վերահսկողության դատավարական ընթացակարգում, որն, ըստ էության, տեղի է ունենում օրենսդրությամբ սահմանված կարգով դատական նիստ հրավիրելու և վարելու միջոցով, նախատեսել է որոշակի առանձնահատկություն առ այն, որ, ի տարբերություն գործի ըստ էության քննության, կալանավորման միջնորդությունների քննարկման համար օրենսդրությամբ սահմանվել է դրանց քննարկման ոչ հրապարակային՝ դռնփակ դատական կարգ:

Հարց է առաջանում, թե որքանո՞վ է արդարացի և արդյունավետ կալանավորման վերաբերյալ միջնորդությունների քննարկման համար ոչ հրապարակային կարգի սահմանումը և ինչպիսի՞ նպատակ ունի դատական գործերի քննության հրապարակային կարգից այդպիսի բացառության նախատեսումը, և, որ ամենակարևորն է, արդյո՞ք նման կարգի սահմանումը չի հակասում Սահմանադրությանը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով քննարկվող դրույթների ընդունման գործընթացում որևէ կերպ չի հիմնավորվում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատական նիստի ոչ

հրապարակային կարգի նախատեսման անհրաժեշտությունը: Թերևս, դա բխում է օրենսդրության և քրեադատավարական ընթացակարգերի այն տրամաբանությունից, որ նախնական քննության տվյալները, թեև գաղտնի չեն, սակայն հրապարակային չեն, ինչը, հատկապես բխում է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունից:

Ինչ վերաբերում է կալանավորման հարցի քննարկման դռնփակ դատական կարգի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությանը, ապա նախ հարկ է կրկին անդրադառնալ արդար դատաքննության իրավունքը սահմանող կոնվենցիոն և սահմանադրական նորմերին:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է.

Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված **ցանկացած քրեական մեղադրանքի** առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սպեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

Այսպիսով, Եվրոպական կոնվենցիան նախատեսում է **ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում** հրապարակային դատական քննության իրավունք: Այլ կերպ

ասած, հրապարակային դատական քննության իրավունքը կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով **վերաբերում է միայն քրեական մեղադրանքին**:

Մինչդեռ, կալանավորման վերաբերյալ միջնորդության քննության ժամանակ մեղադրանքի հիմնավորվածությունը դատական քննության առարկան չի կարող լինել: Այդ միջնորդությունների դատական քննության ժամանակ դատարանի հիմնական խնդիրը կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը բացահայտելն է: Հետևաբար, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված հրապարակային դատաքննության պահանջը չի վերաբերում կալանավորման միջնորդության դատական քննությանը, քանի որ այն մեղադրանքի քննությունն չէ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունը, ինչպես արդեն նշել ենք, հետևյալն է.

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից **իր գործի** արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. **Դատական վարույթը** կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

Սահմանադրական նշված նորմում օգտագործվում է **“իր գործ”** ձևակերպումը, ինչը կոնվենցիայի իմաստին համապատասխան, քրեական դատավարությունում վերաբերում է մեղադրանքին (ըստ էության գործին), այլ ոչ թե, օրինակ, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությանը: Իսկ հոդվածի 2-րդ մասում, որում թվարկվում են դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքերը, օգտագործվում է **“դատական վարույթ”** հասկացությունը, որը վերաբերում է 1-ին մասում նշված գործի, այսինքն՝ մեղադրանքի դատական վարույթին: Կալանավորման հարցի քննության դատական վարույթին այն չի վերաբերում, և հետևաբար, հոդվածի 2-րդ մասում թվարկված դռնփակ դատական քննության դեպքերը չեն կարող ներառել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունների քննության հիմքը:

Ուստի, գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը կասկած չի հարուցում:

Ինչպես արդեն նշել ենք, անհատական սահմանադրական դիմումով հաջորդ վիճարկվող քրեադատավարական նորմը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասն է, որը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության հիմնավորվածության դատական ստուգման գործընթացում նախատեսում է բացառապես դատախազի և պաշտպանի մասնակցություն՝ չսահմանելով ամբաստանյալի մասնակցության հնարավորությունը:

Քննարկվող քրեադատավարական նորմը ենթակա է գնահատման վերը նկարագրված արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի և անձի պաշտպանության իրավունքի համատեքստում:

Ինչպես արդեն նշել ենք, կալանքի նկատմամբ դատական վերահսկողության սահմանման իմաստը, որն իր մեջ որոշակիորեն բովանդակում է նաև դատական պաշտպանության իրավունքի որոշակի բաղադրատարրեր, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի լրացուցիչ երաշխավորումն է: Իսկ դատական վերահսկողությունը ենթադրում է դատավարական այնպիսի ընթացակարգերի սահմանում, որոնք լրացուցիչ երաշխիքներ կստեղծեն անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Ինչպես արդեն նշել ենք, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նկատմամբ դատական վերահսկողության նպատակը այդ միջնորդությունների քննարկմանն երկու իրավահավասար կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի մասնակցության ապահովումն է, դատարանին ակտիվ և ղեկավար դերի վերապահումը, որը, քննարկելով միջնորդությունը, լսելով կողմերի դիրքորոշումները և ուսումնասիրելով ներկայացված նյութերը, որոշում է կայացնում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու մասին:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակության բաղադրատարր է հանդիսանում նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը: Այլ կերպ ասած՝ դատական ակտի բողոքարկման իրավունքն ընդգրկվում է արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ: Հետևաբար, այս ինստիտուտն իր հատկանիշներով պետք է համապատասխանի նշված իրավունքը սահմանող օրենսդրական պահանջներին: Արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքը, ինչպես արդեն նշել ենք, ամենաամփոփ ձևով ենթադրում է, իրավահավասար կողմերի մասնակցությամբ անկախ և անաչառ դատարանի կողմից մրցակցային պայմաններում վեճի օբյեկտիվ լուծում:

Անձի պաշտպանության իրավունքը ենթադրում է իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 67-րդ հոդվածը, ինչպես արդեն նշվել է, սահմանում է, որ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածը նախատեսել է դատական քննությանը բացառապես դատախազի և պաշտպանի մասնակցության պարտադիրություն՝ բացառելով ամբաստանյալի մասնակցության հնարավորությունը:

Նման իրավակարգավորումը, կարծում ենք, չի համապատասխանում անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին այնքանով, որքանով վերջինս զրկվում է անձամբ մասնակցել իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման վարույթին: Միաժամանակ, նշված քրեադատավարական նորմը չի բխում անձի պաշտպանության իրավունքի բովանդակությունից իր պաշտպանությունը անձամբ կամ փաստաբանի միջոցով կազմակերպելու հարցը ազատ ընտրելու համար: Բացի այդ, նշված նորմը կարծես թե պարտադիր է դարձնում կալանավորման որոշման օրինականության ստուգման վարույթում պաշտպանի մասնակցությունը, սակայն միաժամանակ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հիմք քրեադատավարական օրենսգրքով և փաստաբանական գործունեությունը կանոնակարգող օրենքներով սահմանված չէ: Այս իմաստով իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից ևս վիճարկվող քրեադատավարական նորմը խնդրահարույց է, քանի որ հասկանալի չէ, թե եթե անձը պաշտպան չունի, այդ դեպքում արդյո՞ք պետք է ունենա պաշտպան, կամ եթե չունի, գոնե իրավունք ունի՞ անձամբ մասնակցելու վարույթին, կամ եթե ունի պաշտպան, արդյո՞ք իրավունք ունի ինքը ևս անձամբ մասնակցել վարույթին՝ օգտվելով անձամբ պաշտպանվելու իր սահմանադրական իրավունքից:

Ելնելով վերը նկարագրված հիմնավորումներից՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 67-րդ հոդվածի 2-րդ մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը,

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի «Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի և պաշտպանի մասնակցությամբ» դրույթը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 67-րդ հոդվածի 2-րդ մասին:

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան